

նեց մօրը, յանձնարարելով խնամք ունենալ հաճի աղային զաւակէն ու ինք եկաւ փողոց, շարունակելու իր պարտքը:

Սեդրակը հոն, թուրքին տունին մէջ անցուց օրը, անոր գիշերը, յաջորդ ցերեկը եւ իրիկունը տարուեցաւ իր հօրը:

... Այդ օրէն ասդին, այդ տղուն մէջ մտած էր այդ անորակելի պահը, եղբօրմէն, խումբերուն ձեռքը ճր-լացող իր ազգակիցներէն, գազան փաթթոցաւորէն, միակտուր, մեռա՛ծ, բայց տարօրէն կարծր:

Այն օրէն ասդին անոր արթնութիւնը կ'այցուէր այդ պատկերով, ամբողջ ու անփոփոխ, գոյնի եւ զգայնութեան այնքան հարազատութեամբ, որ անոր ջիղերը խախտեցան ու կէս խելագար վիճակ մը ծաւալեցաւ իր վրան: Ու անոր քունը առաջին տարին տեսակ մը գոց աչքով փոխասացութիւն. անդադար աղաչող. նոյն բառերով, որպէսզի խնայուի իրեն:

Գիշերախօս այս տազնապին անդրադարձը ցերեկին վրայ սա լուսթիւնը եղաւ, որ կը բռնէր անոր դէմքը, ինչպէս չաբաթ տեւող անձրեւէ մը հոքը բլուրները թաղող խոնաւ ու կաթկթուն մշուշը: Դեղ, դարման չունեցան արդիւնք: Տարիքը աւելի սրտառուչ ըրաւ այս լուսնահարումը պատանին, որ աճեցաւ ոսկորներէն անըմբռնելի առատութեամբ ու խելքէն մնաց տասնհինգամեայ:

Ընկեր Մաթիկը խորունկ յուզումով մտիկ ըրած էր այս դրուագը. հարիւր հազարներու մէջէն մէկ հատի՛կը, այսպէս մատուցուող իր ջիղերուն սղոցումին: Դժբախտութիւնն ալ մեր աշխարհին վրայ կը հպատակի բախտին: Հազարներ պիտի անցնին հետախաղաղ ու մէկը պիտի խռովէ խղճմտանքները:

Անիկա լացաւ. գիտունի անվայել այս տկարութիւնը ներելով իրեն, իր առանձնութեան մէջ, երբ կը խորհրդածէր իր ցեղին ճակատագրին վրայ: Այս յուզումէն, կա'պը, որ պիտի չքակուէր, իր ու Սեդոյին մէջ, մինչեւ Մոխրնոցի նոյնքան խժդուժ վերջաբանը երկուքին ալ օրերուն: